ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգությունը արդեն սկսված լինելով, մեծ թափով առաջ են տարվում աշխատանքները։ Տանիքի վերանորոգության հետ միաժամանակ առաջ են տարվում նաև ներսի աշխատանքները։ Այժմ վերականգնվում են Նաղաշ Հովնաթանի շուրջ երեք հարյուր տարի առաջ կատարած առաստաղի նկարազարդերը։ Աշխատանքները կատարում են որակյալ նկարիչներ՝ հայտնի մասնագետների ցուցմունքներով ու ղեկավարությամբ։

Նորից կառուցվում են վանքի արևելյան և հյուսիսային պատնեշները՝ տաշած ամուր քարերով։ Շինարարությանը հսկում են Երևանի հայտնի ճարտարապետները, որոնց նախագծով և կատարվում են աշխատանքները։

***

Նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 37-րդ տարեդարձի առթիվ, Էջմիածնի Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցվեց։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։

Կառավարական մաղթանքից առաջ սրբազան հայրը քարոզեց, վեր հանելով այն բոլոր հաջողությունները բոլոր բնագավառներում, որ ձեռք են բերվել 37 տարում՝ շնորհիվ Սովետական բարեխնամ կառավարության։ Վերջում քարոզիչ սրբազանը շնորհավորելով տոնը, մաղթեց ավելի եռանդ ու հաջողություններ՝ գալիք տարեդարձներին։

***

Նոյեմբերի 19-ին Մայր Աթոռ այցելեց ՍՍՌՄ-ի հետ Ալբանիայի բարեկամության ընկերության դելեգացիան, գլխավորությամբ Ալբանիայի Ժողովրդական Ռեսպուբլիկայի Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Մանուշ Մյուֆթիուի։

Դելեգացիային դիմավորեց Մայր Աթոռի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, որը մանրամասն բացատրություններ տվեց հինավուրց Տաճարի մասին։ Դելեգացիայի անդամները մեծ հետաքրքրությամբ ծանոթացան Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանի էքսպոնատների հետ։

Վերջում դելեգացիայի անդամները իրենց շնորհակալությունները հայտնեցին ու մեկնեցին Երևան։

***

Նոյեմբերի 21-ին Մայր Աթոռ այցելեց գերմանական կանանց դելեգացիան, որի կազմի մեջ էին Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայից և Արևմտյան Գերմանիայից 12 կին։

Դելեգացիային գլխավորում էր Գերմանիայի կանանց դեմոկրատական միության նախագահ տիկին Իլզե Դիլեն։

Դելեգացիայի անդամները եղան Մայր Տաճարում, եկեղեցա-հնագիտական թանգարանում, Վեհարանում և, իրենց գոհունակությունը հայտնելուց հետո Սահակ սրբազանին տված բացատրությունների համար, մեկնեցին Երևան։

***

Հայ մեծ հասարակական գործիչ Միքայել Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի կապակցությամբ Երևանում կայանալիք հոբելյանական տոնակատարությանը մասնակցելու համար ժամանած հյուրերը, նոյեմբերի 27-ին, այցելեցին Մայր Աթոռ։

Հյուրերի մեջ էին ՍՍՌՄ եղբայրական ռեսպուբլիկաներից գրողներ և բանաստեղծներ Վ. Կիրպոտինը, Ֆ. Նիզամաևը, Գ. Գուլյամը, Ի. Գրիշաշվիլին, Ի. Շիմկուսը, Մ. Իսկանդարովը, Պ. Վալեսկալնը, Ա. Կանիմետովը, Գ. Զարիևը, Ա. Նուգիսը, Ն. Կորլեյտյանուն, Մ. Ֆետիսովը և ուրիշներ։

Մայր Աթոռում հյուրերին ընդունեց և բացատրություններ տվեց ավագ լուսարար Սահակ սրբազանը։

Հյուրերից մինը վանքի բակում կարդաց ռուսերեն բանաստեղծություն՝ ձոնված հինավուրց Տաճարին և արժանացավ ընդհանուրի ծափահարության։

Հյուրերը իրենց շնորհակալությունը հայտնելով գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսին տված բացատրությունների համար, մեկնեցին Երևան։